

ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՊՈՒԿԱՐԻԱ

Տարեկան 12 ծր.
Վեցամսեայ 6 ծր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու թիւ մէկ ծրարով

Տարեկան 14 ծր.
Վեցամսեայ 7 ծր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 ծր.
Վեցամսեայ 1.50 ծր.

ԿԱՆԽԻԿ

ԵՄԼՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ

20 ՕՆԻ.



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

rev. Père G. Kalemkérlian
tengasce № 4
Vienne

ՀԱՍՏԻ

du Journal

«Ira vounk»

Varna

Редакция на

Вестникъ

«Правуня»

Варна

Գրոշրիւնք կտ չեն
տրուիր

ՎՏԱՐՈՒԱԾ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Վերջապէս տապալեցաւ այն
վարչութիւնը որ իր կազմու
թեամբը հակասութիւն մըն էր
իր կոչման ու գերի մասին, զե-
կապարուած ըլլալով Շահրիկեանէ
մը որ ոչ ազգութիւն կ'ընդունէ,
ոչ Պատրիարք կամ պատրիարքու-
թիւն և ոչ ալ կրօն ու եկեղեցի:

Արդէն, առաջին օրէնսդէ-
մատակը իր լրբութեան չափը
ցոյց տուած էր ընդհանուր Ազգ-
փողովի մը մէջ երբ պատրիարք
պիտի ընդունէր հանգիստաւորա-
ղօթքին ոտքի իսկ չելլելով՝ իր
անկրօնութիւնը ապացուցանելու
համար, և ընտրութեան քուէ չի
տալով՝ պատրիարքը և անոր
պաշտօնը արհամարհելու մտքով:

Անոր այս վարմունքը և անոր
իբր բացատրութիւնն յօդուածով
մը յօրանչած ցափառութեամբ առա-
ջին օրէն իսկ իր արտաքուստը
հարկեցողիչ կ'ընէին ըստ օրինի,
վասն զի օրէնքը բացօթեայ կը
տրամադրէ թէ պաշտօնագէտ ըն-
դունուած ունէ կրօնքի մը չի
պատկանող անձ մը չէ կարելի
ընդունել պետական ու ազգային
պաշտօններու մէջ: Մենք այն օր-
էն իսկ օրէնքին այս խիստ տա-
մաբանական տրամադրութիւնը
մատնանշած էինք այս սինակնե-
րուն մէջ:

Իսկ այս մեր ժողովականները, իզ-
միրլեանէ սկսեալ մինչև յիստինը
նշանակութենէ զուրկ համարե-
ցին այդ մարդուն վարմունքը և
քիչ մըն ալ զգուշացան անոր
ետին կեցող խուժանամիտ ամբո-
խի մը հետ գործ ունենալէ:

Հարկ է յիշել հոս այն բոլոր
ազգալիկաւ ալանդակութիւննե-
րը զորս գործեց այդ մարդը
Ազգ. վարչութեան մէջ, քաջա-
լերութեամբ Պաշտօնացոյց մեղքեցու-
րութենէն և ներքին կռիւ չի հա-
նելու զգուշաւորութենէն:

Ինչ էր այն Երլուրդի խրախ-
ճանքին չի մասնակցելու համար
իւր պնդումը Պատրիարքութեան

մէջ և հետեւեալ օրը իր մասնակ-
ցութիւնը նոյն խրախճանքին
իբր Դաշնակցական Երկերես կեղ-
ծաւորը ու նենգամիտ ազգայն-
այն օրէն ցոյց տուաւ թէ հո-
յոց պատրիարքութեանին ազգեցու-
թիւնը կառավարութեան առջև
կոտորել և Դաշնակցութիւնը անոր
տեղ բարձրացնել կը ճգնի:

Ինչ էր այն պատրիարք Դուր-
եան սրբազանը հրաժարեցնելու
թելադրանքը և յետոյ այդ հրա-
ժարականը անտեղի հռչակելը իր
և իրեններուն միջոցաւ:

Ինչ էր այն «նոր դաշինքը»
ժեռն թիւրքերու հետ երբ ա-
սոնց կառավարութեան դէմ քէն
ըրած էր հայ Ազգը իր պետին
Պատրիարքին հրաժարականու-
թիւնը:

Հապա ինչ ըսել անոր նոր
բացօթեայ զրպարտութեան թէ
Ազգ. երեսփ ժողովոյ մեծամաս-
նութիւնը՝ որդինք կը դատաւի-
տէ, Դեռնդիվարդապետի գործիքը
եղած ըլլալ Արդեօք Բէշեանն
ալ արդեօք թէքէեանն ալ որոնք
սկիզբէն ի վեր Շահրիկեանի
վարչութենէն չառ աւելի խիստ
որոշումներ պահանջած են Ղե-
ւոնդեաններուն դէմ Շահրիկեան
այս զրպարտութիւնը կը հիւսէ
ամբողջ խաբելու և իր պատկա-
շած կուսակցութեան ոչխարա-
միտներուն իրեն ի նպաստ մա-
յիւնը ապահովելու համար. բայց
հայ ժողովուրդի օտուար մեծա-
մասնութիւնը փոշի չի կլլեր
այլևս. իրենց այնքան սիրական
«սեպրէք»եան դրութեան մո-
տան անցած է:

Եւ դեռ ինչքէն ըլլալուն այդ
մարդու պաշտօնավարութեան չը
չանին մէջ քաջարկուած. որ օր
ըստ օրէ պիտի բացուին և մեր-
կացնեն ազգադաւ ձիգլիթը:
Մենք ապահով ենք այդ բանին.
ամբար մը ցորենին նմուշը ափ
մը կ'ըլլայ:

Ազգ. երեսփ ժողովը ուշ իսկ
մնաց վտարելու Շահրիկեանի
վարչութիւնը, բայց լաւ է ուշ
քան երբէք:

Յ. Պարպիք

ԱԶԳԱՅԻՆ

Ակնայ մէջ դաշնակցական ք-
առաջնորդարանը փակելու պատ-
ճառ տուած են, վասն զի ազգա-
յին սնտուկի մատակարարութեան
զեկը ձեռք անցնելով ճշուժ բա-
նեցուցած են եկեղեցւոյ քայքե-
րը ծախելու և գոյացած դրամը
իրենց տրամադրութեան տակ
դնելու համար:

— 25 թիւնէն սկսեալ 20 թիւ
նամակ մը ոչ ինչ չի մայր վեր-
ջին ընդհարմար մը մասին որ
տարածայնուած էր ամսոյս սկիզբ
ները. նամակագիրը սղութեան
մասին զանգատ կը յայտնէ և
օգնութիւն կաղերսէ:

— Արմաշի դպրեվանքին մէջ
20 հատ կիլիկեցի որբեր պիտի
ընդունուին որոնց 10 ին համար
տարեկան ծական ոսկի պիտի վճա-
րեն Ատաբաղարցիք:

— Գաւառներու մէջ վկայական
չունեցող հայ սուսուցիչները կա-
ռավարութիւնը կը զինուորագրէ
եղեր, որով շատ վարժարաններ
առանց վարժապետի կը մնան:

— Մարաշի պատերազմական
ատենը կարգ մը թուրքեր
թիապարտութեան դատապար-
տած է կոտորածի և թալանի
մասնակցած ըլլալուն համար:
Սուլթանը հրամայած է գործադ-
րել այդ վճիռները: Բայց ասոնց
ալ փախուստը ապահովուած ըլլա-
լու է:

— Լատինները կիլիկիոյ մէջ
մեծ դործունէութիւն ցոյց կու-
տան հայոց թշուառութենէն օգ-
տուելու և իրենց փորձիւնը որսալ
համար: Այսինքն ամէն տեղ վտար-
ժարաններ բացել են այդ նպա-
տակին համար և հոն ձգել ատեն
էն ըսելով զիրար կը խրախուսեն
Մեր Միացեալ ընկերութիւնն ալ
պէտք է մրցի անոնց հետ:

— Առանա քաղաքին մէջ տա-
կաւին չեն սկսեր այրած տուե-
րու տեղ գոնէ տնակներու շինու-
թեանց կուսակալը Պոլսէն ուղ-
ղուած հարցումի մը պատասխա-
նած է հեռագրաւ թէ քաղաքին
մէջ ալ պիտի սկսին շինութիւն:

ները որովհետեւ պէտք եղած յա-
տակագծերը պատրաստուած են:
Տակաւին նոր պիտի սկսին եղեր:
— Երեսփ ժողովոյ Տ. Յարութիւն
Պատրիարքը Դեռնդեան խմբակի
թելադրանքները մերժելով, հա-
մակերպութիւն յայտնել սկսած է
Ազգ. երեսփ ժողովոյ որոշումնե-
րուն: Երեսփ ժողովոյ Տեղապա-
կարգուած Տ. Դանիէլ Մ. Վ. Յա-
կոբեան այս օրեր հոն կը հասնի:

— Անտիոքի կոտորածին կաղ-
մակերպիչներէն երեք ազգեցիկ
թուրքեր պատերազմական ատ-
ենին վճիռով աքսորի գատա-
պարտուած էին: Կիլիկիոյ կաթս-
ղիկոսը կը հեռագրէ թէ այժմ
ազատ ձգուել են:

— Էրզնէի (Կիլիկիա) բանտար-
կեալները գրով մը Պատրիար-
քարա՛ի կը գանգատին իրենց
թշուառկացութենէն և կրսեն թէ
բանտապահներու կողմէ ձեռք ու
խոշտանքման կենթարկուին և
թէ իրենցմէ 2ը վիրաւորուած
է:

ՔՕՂԸ ԿԸ ՊԱՏՈՒ

Առանալի թիւրք Գոմիթէին
նախագահը և իրիտալ թերթին
խմբագրապետը ըլլալով, հայերու
դէմ գրգռիչ յօդուածներ հրա-
տարակող Իհսան Ֆեդայիին Եգիպ-
տոս փախած ըլլալը գրած էինք:
այդ վտար հոն հետեւեալ յայ-
տարարութիւնները ըրեր է:

«Ես ապացոյցներ ունիմ հաս-
տատող, թէ Կիլիկեան ջարդերը
Հիւսէյին Հիւլի փաշային ծրագ-
րով տեղի ունեցած են, իսկ ան-
ցանքս այն է որ ես դէպքէն
անմիջապէս յետոյ Հայերուն ան-
նպաստ յօդուածներ գրեցի: Բայց
այդ յօդուածները տեղական կա-
ռավարութեան թելադրութեամբ
գրեցի և ես այս պարագան
պիտի կրնամ հաստատել այն
միւլէտտէներով, որոնք ին-
ժի զրկուած են նոյն ատենի կա-
նաչառութեան:

(Շարունակւորի նը կարդալ Արդ-
եղին մէջ)

ՎՍՈՒՄՅԻ ՄԻԹԻՍԿԻՆ

Ա Ռ Թ Ի Ի

Պուլկարիոյ Աղատական կուսակցութեան օսկան Նարոնա Բուսիւթի թիւ 220ի մէջ տեսնուեցաւ հետեւեալ յօդուածը, որ նոյն կուսակցութեան պետերէն նախկին քաղաքագետ մը ստորագրած է զքաղաքացիոյ կեդրոնումը:

Առջի օր Սաէտինէնի սրահին մէջ միթինկ մը գումարուած էր օտարներու և մանաւանդ—ինչպէս ըսուած էր—նախաձեռնարկ եղողներու յայտարարութեան մէջ—հայ արհեստավարներու—գէմ, որոնք ապօրէն կերպով կը մըրցին եղեւ Պուլկարիոյ հետ:

Վառնայի հասարակութիւնը զղուռնքով վերաբերուեցաւ այդ յայտարարութեան հանդէպ որովհետեւ կերէի չէ թէ Վառնայի էսնաֆներու շահերուն վտանգի սպառնալիքի մը գոյութենէն դուրսուած է միթինկին դուրսուած այլ աւելի մէկ երկու անձի որոնք կը խորհին թէ ուրիշներն են յանցաւոր կամ պատճառ երբ իրենց դործերը անյաջող կերթան և որոնք կը նախընտրեն սրճարաններու մէջ նստիլ քան իրենց խանութը մը նստիլ ջանալ կատարելագործել արհեստին որ քոհացնեն յաճախորդներն:

Միթինկին ներկաները 200 հոգիէ աւելի չէին, նախաձեռնարկ եղողներէ մէկը միայն խօսեցաւ, խօսուածքը լուրջ չէր ու ներկաները միայն կը ծիծաղեցնէր:

Մինչև հոս գործը թէև ցաւալի, բայց մարդիկ որոշած էին միթինկի այդ խաղը անկուտի թողուլ, սակայն Վառնայի քաղաքացիները անակնկալի եկան երբ կարդացին Սօֆիայէ եկած թերթերը, որոնց ուղղուած են հեռագիրներ թէ Վառնայի մէջ հակահայկական միթինկը մեծ քաղաքութեամբ տեղի ունեցած և 2000 հոգի ներկայ գտնուելու Անճառութիւն մըն է այդ որովհետեւ կիթինկին 200 հոգի ներկայ էին և անոնք ալ հետաքրքիրներ:

Երբ հարցը Հայերու մասին է, թող թոյլատրուի ինձ քանի մը խօսք ըսել: Ստարահայտակ հայեր փախան և Պուլկարիա եկան գլխաւորաբար Վառնա, 1896 ին Պուլսոյ ընդհանուր ջարդի առեւն: Պուլկարիա այն առեւն իր սահմանի դուռները լայնօրէն բացաւ և ատով գերազանցօրէն բարեգործութիւն մը կատարեց: որովհետեւ ապաստանարան տուաւ դժբախտ Հայաստանի դաւալներուն որոնք ճակատագրակից են Մակեդոնիոյ և էտիոպիայի մեր եղբայրներուն: հայ գաղթականները պուլկարիոյ կողմէ եղբայրաբար ընդունուեցան: Անոնք Ա գլխոյ բարեգործ գաւազներու

բաշխած նպաստներովը կրցան գործի ձեռնարկել: գլխաւորաբար «եղամայի չէնպէրի» չինութեամբ, ներկարարութեամբ և երկաթագործութեամբ զբաղելով: ինչպէս կը տեսնենք, անոնք ձեռնարկեցին արհեստներու, որոնք մինչև այն առեւն հոս մեր մէջ գոյութիւն չունէին, հետեւաբար պուլկար արհեստավարներու հացը չի խլեցին: Հոս հոն մասնաւոր անձեր ուրիշ արհեստներու ալ ձեռնարկեցին, բայց այդ ոչ ոքի վնաս չի պատճառեց: Գաղթականութենէն մէկ երկու տարի վերջ, երբ դուրսիւնը մի քիչ հանդարտեցաւ, սկսան Պուլիս դառնալ, իսկ անցեալ տարի երբ թուրքիոյ մէջ սահմանադրութիւն վերահաստատուեցաւ, զբոյժէ ամէնքը վերադարձան: հոս բոլորովին փոքրամասնութիւն մը մնաց, ասոնք ունին իրենց արհեստները, գլխաւորաբար երկաթագործութիւն և եղամաշտութիւն: անոնք ոչ ոքի չարիք չեն բերել: իսկ եթէ անոնց մէջ կը գտնուի երկրին օրէնքին հակառակ գործեր կատարող և կամ ապօրէն միջոցներով կը մըցի իր արհեստակիրներու գէմ, երկրին օրէնքը կը պատժէ ան և ապօրինի մըցման կարելիութիւնը կը խլէ անկէ: Այդպիսիներու դէմ ամէն ոք կարող է առանձին բողոքել կառավարութեան և կամ արհեստակցական կազմակերպութեան: Բայց մէկ երկու և կամ 10 հոգիի համար կուր յայտարարել ամբողջ աղբի մը դէմ, այդ չլուած յայտարարութիւն մըն է:

Մանուանդ այդ տեսակ կռիւ մը Հայերուն դէմ դատապարտելի է որովհետեւ հայ ժողովուրդը միշտ բարեացակամ դէպի մերինը և միշտ ցաւակցած է մեր դժբաղդութեանց ու խնդակցած ենք: Այսպէս էր անոնց վերաբերումը դէպի մեր ժողովուրդը մեր աղատութենէն առաջ, այդպէս կը մնան մինչև հիմա, այդպէս պիտի մնան միշտ: որովհետեւ թէ՛ մենք և թէ՛ հայերը միևնոյն քաղաքական ճակատագիրը ունենք և ունինք, և ո՛նէ պատճառ մը գոյութիւն չունի երկու աղբերը իրարու հանդէպ թշնամօրէն վերաբերուելու:

Բայց վերի մեր գաղափարութեամբ աններելի է հալածել ով որ ալ ըլլայ: միայն օտար ըլլալուն համար, երբ այն իրաւաւորութեամբ և օրինաց թոյլադրած միջոցներով իր ապրուստը կը հայթայթէ:

(Նարոնա Բուսիւթ) Կրատաւեկե



ԱԶԳ. ԵՐԵՍՓ. ԺՈՂՈՎ

ԱՆԿՈՒՄ ԾԱՀՐԻԿԵԱՆՆԵՐՈՒ

Աղդ, ժողովոյ անցեալ ուրբաթի չորսը կէսին դոնիսկ տեղի ունեցաւ, հայ խմբագիրները իսկ ներս չընդունուեցան:

Ատենան բացուած պահուն ատենապետ Մինաս էֆ. Չերաղ յայտարարեց թէ իրենց պաշտօնը լրացած է այլեւս, հետեւաբար հրաւիրեց երկրորդին երեսփոխան Յ. Գորեան էֆ. և ատենապետելու իսկ կրտսերագոյն անդամ Վ. Թէքեան էֆ. հրաւիրեցաւ տոնարարութեան պաշտօնին:

Գորեան էֆ. ժողովոյ 15 և 16րդ նիստերուն ատենապետութիւնները վաւերացման ենթարկելէ յետոյ ներկայացուց Յ. Հինդլեան էֆ. ի մէջ գերը, Հինդլեան էֆ. Կ'իշէր որ Իգսաւի մէջ հրատարակուած էր թէ Գոր. ժողովոյ երկու անդամներ կառավարութեան անդակ պաշտօնի խիստ քաղաքականութեան մը հետեւելու կուսակց ինչ, ուստի հարցում կուղղէր թէ որոնք են այդ երկու անդամները (հէ՞ Ծահրիկ):

Աւետիս էֆ. Սուրէնեանի մէկ նամակը կտրղացուեցաւ, որով իր երեսփոխանական ընտրութեան վաւերացման յետագման մասին կ'որոշէր. այս գիրն յանձնուեցաւ նախաձեռնութեան գրեւորին որ այս երեսփոխանական ընտրութեան վրայ եղած բողոքները քննելու վաշտուն ունի:

Ստալարկուեցաւ մայր զիւանդ հաստատել և ընդհանուր ծափահարութեան արժանացաւ այս առաջարկը սակայն Մ. Չերաղ էֆ. եւ յետոյ Մայր—գիւանի բոլոր անդամները բացառակապէս հրաժարեցան եւ պէտք եղաւ նոր ընտրութեան:

Այս միջոցին 76 երեսփոխաններ կային, երկու հոգի ձեռնպահ մնալով և 74 քուէարկուեցին 48 ինքուով Ատենապետ հռչակուեցաւ Տօք Տիգրան պէյ Աճէմեան: 8 քուէ օտացաւ Վառնապուհ էֆ., 7 քուէ Գորեան էֆ., 6 քուէ Պարգեւ էֆ. Փափաղեան:

Երկրորդ և երրորդ ատենապետներու ընտրութիւնը յետագուեցաւ յաջորդ նիստին. ժամանակին սղութեան պատճառաւ Յետոյ կատարուեցաւ ատենապետներու ընտրութիւնը և հետեւեալ արդիւնքը յառաջ եկաւ:

Վ. Թէքեան էֆ.	69
Ս. Սուրէն »	63
Ե. Օտեան »	35

Ներկաներու թիւը 85 ի բարձրացած էր այս պահուն և ժողովն անցաւ օրակարգի:

Նախ նկատողութեան առնուեցան Գ. Աւանեան էֆ. ի գրաւոր հրաժարականը եւ Ե. Քէչեան էֆ. ի Բիւզանդիոյ միջոցաւ հրատարակուած հրաժարականը, եւ Ս. Գորեան էֆ. ի հրաժարականը երեքն ալ Բ. Դուռն երթալիք պատուիրակութեան անդամակցութենէ, իսկ Տ. Հայեան Ս. կառավարիչ պատուիրակներու թիւը Յ ի բարձրացնել Ձը եկեղեցական ընտել և Վարչութեան անկախ կերպով գործել:

Այս հրաժարականներէն վերջ խնդրի եղաւ որ նոր պատուիրակութիւն մը պէտք է ընտրել թէ Գոր. ժողովին հրաժարականի խն-

դիրը նկատողութեան առնելու Բաւական վճարանութենէ վերջ նկատուելով որ Վարչութեան երկու գլխաւոր անդամները (Տ. Հայեան Ս. եւ Գորեան էֆ.) պիտի մասնակցէին այս պատուիրակութեան մինչ վարչութիւնն հրաժարելով այլ եւս չգիտի կրնան մասնակցել ուստի որոշուեցաւ օրակարգին Գ. խնդիրն այսինքն Բաղ. ժողովոյ հրաժարականի խնդրը նկատողութեան առնելու:

Երեսփոխաններէ ոմանք, ինչպէս Հայեան Ս. Խոսրովեան, Յ. Հինդլեան էֆ. ներս եւ ուրիշներ գիտել տուին թէ Վարչութեան գաւառ եւ էմիրմիւն իրաւունք չունի կատարելու այդ բանակցութիւնը սակայն Վառնապուհ, Հ. Խոսրովեան եւ Ս. Գորեան էֆ. ներք ժողովին որոշումը չի ընդունու կողմը գտնուեցաւ որով առաջնութիւն ստուգաւ Գաղաքական ժողովոյ հրաժարականի խնդրին:

Այս որոշման վրայ կարգացուեցաւ վարչութեան 6 անդամներու կողմէ ստորագրուած հաւաքական հրաժարականը դարձեալ Յովհան. Նէսեան էֆ. ի պարզ հրաժարականը Շիրիքեան էֆ. պատճառաբանաւ հրաժարականը եւ Ծահրիկեան էֆ. ի հրաժարականը: Այս վերջին հրաժարականը որ 10—12 էջէ կը բաղկանար կարգացուեցաւ աղմուկներու մէջ. որովհետեւ ոմանք գիտել կուտային թէ աւելի համարատուութիւն եւ ամբաստանողիք է քան թէ հրաժարականը ուրիշներ կէրն զատապարտելու նպատակով գրուած է եւ քանի որ Ծահրիկեան էֆ. հաւաքական հրաժարականն ստորագրած է պէտք չէ որ կրէին. անհատական հրաժարական մը մատուցանել իսկ երրորդ մաս մ'ալ կը բողոքէր զի Ծահրիկեան քաղ ժողովոյ դէմ եղած այս յարձակումները յառաջ եկած են կրէր երեսակներ Ղ. Ե. Թէք. Վ. ինչպէս կիցներուն վարչութեան դէմ հաւաքականութենէն եւ իրենց աղմուկին մէջ Վարչութիւնը տապալելով այս խնդիրը խնդրելու քաղածաքէն Ոմանք ընթերցման ընդհատուած. ուրիշներ շարունակութիւնը պահանջեցին բայց վերջապէս զմեզ հոլութեան եւ բողոքի ձայներուն վրայ կարգացուեցաւ, եւ խուսը մը ժողովականներ մոկեցան սրահէն:

Ատենապետն ալ գիտել տուաւ նամակին երկարութիւնը. բայց վերջապէս ընթերցումը լրացաւ:

Չերաղ էֆ. Գաղաքական ժողովոյ հրաժարականին մէջ Աղդ ժողովն իրեն օրինազանց ներկայացուած ըլլալուն դէմ բողոքելով քանաձեւ մը ներկայացուց որուն հասեմաս Աղդ ժողովն ընդունելով Գաղաքական ժողովոյ հրաժարական պատճառաբանութիւններ մերժել կատարեց: Չերաղ էֆ. զիտել առաւ որ եթէ Գաղաքական ժողովը սահմանադրական չի համարիր Աղդ ժողովոյ կողմէ ընտրուած պատգամաւորութիւնը, իրենք ալ կ'ըսեն թէ միթէ սահմանադրական էր որ սահմանադրութեան մէջ յիշուած տէրութեան եւ ազգին յարաբերութեանց միջնորդը Գաղաք. ժողովն ըլլայ փոխանակ Պատրիարքին, եւ սահմանադրական է որ Գաղաքական ժողովն հրաժարեցնէ Պատրիարքը որ գլուխն է Աղդին եւ պէտք է այդ անդինակութիւնը թողուլ իրեն, ատեն զայն պաղիկցնել ձգտող արարներու:

